

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Երևանի պետական համալսարանի Ֆիզիկայի ֆակուլտետի
գիտական խորհրդի 17.06.19թ. կայացած թիվ 13.18-19 նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 36 անդամներից 34-ը:

Հաստատվեց հետևյալ օրակարգը՝

1. Միջուկային ֆիզիկայի, պինդ մարմնի ֆիզիկայի ամբիոնների վարիչների ընտրություններ:
2. Ընթացիկ Հարցեր:

Նիստը վարեց ֆիզիկայի ֆակուլտետի դեկան, պրոֆ. Ռ. Հակոբյանը:

Լսեցին՝ ամբիոնների վարիչների պաշտոնի թեկնածուների քննարկման հարցը:

2 ամբիոնների վարիչների թեկնածուներին ներկայացնելու և կարծիք հայտնելու համար **ելույթ ունեցավ** մրցութային հանձնաժողովի նախագահ Ա. Կիրակոսյանը: Պարոն Կիրակոսյանը ներկայացրեց միջուկային ֆիզիկայի ամբիոնի վարիչի թաժուր պաշտոնը զբաղեցնելու մրցութի մասնակից Անահիտ Ռաֆիկի Բալաբեկյանի, նշեց, որ Ա.Ռ. Բալաբեկյանն ունի միջուկային ֆիզիկայի ամբիոնում աշխատանքի երկարամյա ստաժ և աչքի է ընկել ակտիվ գիտամանկավարժական գործունեությամբ: Աշխատանքային գործունեության ընթացքում ակտիվորեն մասնակցել է ամբիոնի ուսումնական պրոցեսին, իսկ գիտական գործունեության ընթացքում հրապարակել է 106 աշխատանք: Ֆիզ.-մաթ. գիտությունների դոկտոր է 2010թ.-ից:

Ա. Կիրակոսյանը ներկայացրեց պինդ մարմնի ֆիզիկայի ամբիոնի վարիչի թաժուր պաշտոնը զբաղեցնելու մրցութի մասնակից Արշակ Լյուդվիգի Վարդանյանին, նշեց, որ Ա.Լ. Վարդանյանն ունի պինդ մարմնի ֆիզիկայի ամբիոնում աշխատանքի երկարամյա ստաժ և աչքի է ընկել ակտիվ գիտամանկավարժական գործունեությամբ: Աշխատանքային գործունեության ընթացքում ակտիվորեն մասնակցել է ամբիոնի ուսումնական պրոցեսին, իսկ գիտական գործունեության ընթացքում հրապարակել է 127 աշխատանք: Ֆիզ.-մաթ. գիտությունների դոկտոր է 2013թ.-ից:

Պարոն Կիրակոսյանը ասաց, որ մրցութային հանձնաժողովը երաշխավորել է 2 թեկնածուներին էլ ամբիոնների վարիչների թափուր պաշտոնները զբաղեցնելու համար:

Նախագահ Ռ. Հակոբյանը գիտխորհրդի անդամներին ներկայացրեց քվեարկության կարգը: Փակ, գաղտնի քվեարկություն անցկացնելու նպատակով գիտխորհրդի որոշմամբ կազմվեց հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝

1. Արամ Սահարյան (նախագահ)
2. Մարտին Գրիգորյան
3. Մաքսիմ Սարգսյան:

Հաշվիչ հանձնաժողովը գիտխորհրդի անդամներին բաժանեց մեկական քվեաթերթիկ: Քվեարկության ավարտից հետո հաշվիչ հանձնաժողովն ամփոփեց արդյունքները և կազմեց համապատասխան արձանագրությունները: Որից հետո հայտարարվեցին ընտրությունների արդյունքները:

Քվեատուփում առկա էին 34 քվեաթերթիկ, կար 1 անվավեր քվեաթերթիկ: Փակ, գաղտնի քվեարկության արդյունքում միջուկային ֆիզիկայի ամբիոնի վարիչ է ընտրվել Ա. Բալաբեկյանը՝ 33 կողմ ձայներով, պինդ մարմնի ֆիզիկայի ամբիոնի վարիչ է ընտրվել Ա. Վարդանյանը՝ 32 կողմ և 1 դեմ ձայներով:

Որոշեցին՝ միջուկային ֆիզիկայի ամբիոնի վարիչ է ընտրել Անահիտ Ռաֆիկի Բալաբեկյանին: Պինդ մարմնի ֆիզիկայի ամբիոնի վարիչ է ընտրել Արշակ Լյուդվիգի Վարդանյանին: Ընտրությունների արդյունքներն ընդունվեցին միաձայն:

Ընթացիկ հարցերում

Ելույթ ունեցավ՝ ֆակուլտետի դեկան Ռ. Հակոբյանը, ով ներկայացրեց Գիտական հետազոտությունների հայ-իտալական համատեղ ծրագրի «ՀՀ ԿԳՆ ԳԿ – ԻՀ ԱՀԽ - 2019» միջազգային մրցույթին դիմած նախագծերը և առաջարկեց երաշխավորել դրանք մրցույթին մասնակցելու համար:

Որոշեցին՝ Երաշխավորել նախագծերը Գիտական հետազոտությունների հայ-իտալական համատեղ ծրագրի «ՀՀ ԿԳՆ ԳԿ – ԻՀ ԱՀԽ - 2019» միջազգային մրցույթին դիմելու համար:

Ելույթ ունեցավ՝ ֆակուլտետի դեկան Ռ. Հակոբյանը, ով ներկայացրեց Ֆիզիկայի ֆակուլտետի 60-ամյակին նվիրված "Ֆիզիկայի ֆակուլտետի պատմությունը" գիրքը և առաջարկեց երաշխավորել այն ԵՊՀ տպարանում տպագրության համար:

Որոշեցին՝ Երաշխավորել "Ֆիզիկայի ֆակուլտետի պատմությունը" գրքի տպագրությունը ԵՊՀ տպարանում:

Ֆիզիկայի ֆակուլտետի դեկան՝



Ռ.Ս. Հակոբյան

Խորհրդի քարտուղար՝



Շ.Ա. Տոնոյան